ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանի՝ Ֆրանսիայի Հանրապետություն (Ստրասբուրգ) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Ռուստամ Բադասյան:

Գործուղվող անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարար:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Ֆրանսիայի Հանրապետություն (Ստրասբուրգ), 2019 թվականի հոկտեմբերի 13-16-ը:

Հրավիրող կողմը՝ Ֆրանսիայի Հանրապետության արդարադատության նախարար Նիկոլ Բելուբե և ԵԽ նախկին գլխավոր քարտուղար Թյորբորն Յագլանդ:

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն «Արդարադատության թվային մարտահրավերները Եվրոպայում» խորագրով համաժողովին:

Քննարկված թեմաները՝ Թվային դարաշրջանում արդարադատության մատչելիության ապահովմանը, էլեկտրոնային արդարադատության համակարգերի ներդրմանը, քրեական արդարադատության ոլորտում թվային տեխնոլոգիաների ազդեցությանը, արհեստական բանականության ներդրմանն առնչվող մի շարք հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

ՀՀ արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանը 2019թ. հոկտեմբերի 13-ից 16-ը Ֆրանսիայի Հանրապետությունում (Ստրասբուրգ) մասնակցել է «Արդարադատության թվային մարտահրավերները Եվրոպայում» խորագրով համաժողովին:

«Արդարադատության թվային մարտահրավերները Եվրոպայում» խորագրով համաժողովին ՀՀ արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանը հանդես է եկել ելույթով: ՀՀ արդարադատության նախարարը համաժողովի մասնակիցներին տեղեկացրել է, որ 2019թ. հոկտեմբերի 10-ին ՀՀ կառավարության կողմից հաստատված Դատական և իրավական բարեփոխումների ռազմավարության ու

Գործողությունների ծրագրով նախատեսվում է ապահովել արդարադատության ոլորտի ինստիտուցիոնալ զարգացումը, որի բաղկացուցիչ մասն է կազմելու Էլեկտրոնային արդարադատության գործիքների ներդրումը:

Նախարարի խոսքով՝ դրա նպատակն է միավորել արդարադատության մարմիններում գործող բոլոր էլեկտրոնային համակարգերը և տվյալների շտեմարանները, արդիականացնել դատարաններում գործող էլեկտրոնային կառավարման համակարգերը, դրանց հիման վրա դատարաններում ներդնել և գործարկել դատական միասնական էլեկտրոնային կառավարման համակարգ, ստեղծել իրավապահ, դատական և իրավակիրառ մարմինների միջև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ, ներդնել պաշտոնական առցանց նամակագրության համակարգ, ապահովել համակարգի միջոցով վիճակագրական տվյալների հավաքագրումը վարույթի ողջ ընթացքում, ինչպես նաև ապահովել թվային արխիվների ստեղծումը:

Իր ելույթում ՀՀ արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանը շեշտել է, որ տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը չի շրջանցել Հայաստանի պետական կառավարման և արդարադատության ոլորտները: Մասնավորապես, Եվրոպական միության, USAID-ի, ՄԱԶԾ-ի, Համաշխարհային բանկի և միջազգային այլ դոնոր կազմակերպությունների աջակցությամբ մշակվել և գործարկվել են էլեկտրոնային հարթակներ և համակարգեր, որոնցից են www.e-draft.am իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքը, ՀՀ արդարադատության նախարարության կողմից մատուցվող ծառայությունների բարելավմանը նպաստող www.e-hotline.am կայքը, ՀՀ պետական մարմինների կողմից տրամադրված պաշտոնական փաստաթղթերի վավերականությունը ստուգելու նպատակով ստեղծված www.e-verify.am միասնական կայքը, www.e-notary.am կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման նպատակով գործարկված www.azdararir.am հարթակը և այլն:

ՀՀ արդարադատության նախարարն ընդգծել է, որ թվային դարաշրջանում առկա նոր մարտահրավերներին զուգահեռ՝ թվայնացումը հսկայական օգուտ է տալիս. ստեղծված էլեկտրոնային ժողովրդավարության գործիքների միջոցով կառավարությունները պայքարում են կոռուպցիայի դեմ և պարզեցնում են վարչարարությունը:

Ռուստամ Բադասյանը, եզրափակելով ելույթը նշել է, որ տեխնոլոգիաների և մասնավորապես արհեստական բանականության լայնածավալ կիրառումը որոշումների կայացման գործընթացում լուրջ մարտահրավերներ է բացահայտում Կառավարությունների և ժողովրդավարությունների համար: Այս առումով նախարարը Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների իր բոլոր գործընկերներին առաջարկեց ներգրավվել լավագույն իրավական դաշտի մշակման գործում, ինչը հնարավորություն կստեղծի արհեստական բանականության և ալգորիթմային որոշումների կայացման գործընթացը դարձնել առավել անվտանգ և ոչ խտրական:

ՀՀ արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանը Ստրասբուրգ կատարած այցի ընթացքում ունեցել է մի շարք աշխատանքային հանդիպումներ: Մասնավորապես, ՀՀ արդարադատության նախարարը հանդիպումներ է ունեցել Ֆրանսիայի Հանրապետության արդարադատության նախարար Նիկոլ Բելուբեի, Ռուսաստանի Դաշնության արդարադատության նախարար Ալեքսանդր Կոնովալովի, Վրաստանի արդարադատության նախարար Տեա Ծուլուկիանիի, Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Մարիա Պեյչինովիչ Բուրիչի, Եվրոպայի խորհրդի Իրավունքի գերակայության և մարդու իրավունքների հարցերով գլխավոր տնօրեն Քրիստոս Ջիակումոպուլոսի և Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (GRECO) գործադիր քարտուղար Ջիանլուկա Էսպոզիտոյի հետ:

Ֆրանսիայի Հանրապետության արդարադատության նախարար Նիկոլ Բելուբեի հետ հանդիպման ընթացքում նախարարները քննարկել են երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցերի լայն շրջանակ և անդրադարձել

փոխադարձ իրավական օգնությանը վերաբերող մի շարք հարցերի: Պայմանավորվածություն է ձեռք բերվել երկու երկրների միջև ինտենսիվացնելու համագործակցությունն ու շփումներն արդարադատության ոլորտում:

Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարները քննարկել են երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցերի լայն շրջանակ: Հանդիպման ընթացքում Հայաստանի արդարադատության նախարարը ռուս գործընկերոջը հրավիրել է Հայաստան, իսկ ՌԴ արդարադատության նախարարը Ռուստամ Բադասյանին հրավիրել է մասնակցելու Պետերբուրգյան միջազգային իրավաբանական ֆորումին:

ՀՀ արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանի և Վրաստանի արդարադատության նախարար Տեա Ծուլուկիանիի միջև տեղի ունեցած հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են 2019թ. դեկտեմբերին Հայաստանում նախատեսվող հայ-վրացական իրավական հերթական ֆորումին առնչվող և մի շարք այլ հարցեր:

ՀՀ արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանը Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Մարիա Պեյչինովիչ Բուրիչի հետ հանդիպման ընթացքում անդրադարձել է Հայաստանի դատաիրավական և հակակոռուպցիոն ոլորտներում իրականացվող բարեփոխումներին, ներկայացրել այդ ուղղությամբ վերջին զարգացումները, մասնավորապես, անդրադառնալով 2019թ. հոկտեմբերի 10-ին ՀՀ կառավարության կողմից հաստատվեած Դատական և իրավական բարեփոխումների ռազմավարության ու Գործողությունների ծրագրով, ինչպես նաև ս.թ. հոկտեմբերի 3-ի ՀՀ կառավարության թիվ 1332-Ն որոշմամբ հաստատված Հակակոռուպցիոն ռազմավարության ու դրա գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումներին:

ՀՀ արդարադատության նախարարի և Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (GRECO) գործադիր քարտուղար Ջիանլուկա Էսպոզիտոյի հետ հանդիպման ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել առ այն, որ

GRECO-ն կշարունակի փորձագիտական աջակցություն ցուցաբերել հակակոռուպցիոն ոլորտի բարեփոխումներին:

Հարգանքով, ՀՀ արդարադատության

X _____

նախարար՝

Ռուստամ Բադասյան

18 հոկտեմբեր 2019թ.